

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳՐԻՐ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ X

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME X

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2015

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2015

YSU PRESS
YEREVAN - 2015

Հրատարակության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի խորհրդի որոշմամբ

Рекомендовано к печати ученым советом Богословского факультета Ереванского государственного университета

Approved to publication by the Board decision of the Faculty of Theology of Yerevan State University

Գրախոս՝ ՀՀ ԳԱԱ ակադ., պ. գ. դոկտ., պրոֆ. Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Рецензент: член-корреспондент НАН РА, докт. ист. наук, профессор В. Б. БАРХУДАРЯН

Reviewer, NAS RA acad., prof. V. BARKHUDARYAN

Խմբագրական կազմ՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԵՍՍԻ ՓԱՄԿՈՉՅԱՆ, Հ. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., **Ռ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ** պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., **Ս. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ** պատմ. գիտ. դոկտ., **Ա. Ս. ՍԱՀԱԿՅԱՆ** պատմ. գիտ. դոկտ. **Է. ՇԻՐԻՆՅԱՆ** պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., **Լ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ** պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.

Редакционная коллегия: ЕПИСКОП АНУШАВАН ЖАМКОЧЯН, А. Г. АВETИСЯН, докт. ист. наук, профессор, Р. О. ВАРДАНЫАН, докт. ист. наук, профессор, С. С. МКРТЧЯН, докт. ист. наук, А. С. СААКЯН, докт. ист. наук, профессор, Э. С. ШИРИНЯН, докт. ист. наук, профессор, Л. А. САՐԳՅԱՆ, докт. ист. наук, профессор

Editorial board: ANUSHAVAN Bishop ZHAMKOCHIAN, H. G. AVETISYAN, Prof., PhD in History, R. H. VARDANYAN, Prof., PhD in History, S. S. MKRTCHYAN, PhD in History, A. S. SAHAKYAN, PhD in History and Philology, M. E. S. SHIRINYAN, Prof., PhD in History, L. A. SARGSYAN, Prof., PhD in History

Տարեգիրք | Ежегодник | Yearbook 2015

Աստվածաբանության ֆակուլտետ, Եր.: ԵՊՀ հրատ., 2014, 358 էջ:

Факультет Богословия, Ереван. Издательство ЕГУ, 2015, 358 стр.

Faculty of Theology, Yerevan. YSU Press, 2015, 358 pages.

Տարեգիրքն ամփոփում է Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի 2015 թ. կատարած ուսումնասիրությունների արդյունքները, որոնք նվիրված են աստվածաբանությանը, կրոնագիտությանը և հայագիտությանը:

Տարեգիրքում գետեղված հետազոտությունները հետաքրքիր են աստվածաբանների, կրոնագետների, ինչպես նաև հասարակական գիտությունների տարբեր բնագավառների մասնագետների համար:

Ежегодник содержит результаты научных исследований по теологии, религиоведению, арменоведению профессорско-преподавательского состава богословского факультета Ереванского государственного университета за 2015 год.

Опубликованные в ежегоднике исследования могут заинтересовать богословов, религиоведов, а также специалистов в различных областях общественных наук.

The Yearbook covers research results conducted in 2015 by the staff of Department of Theology of Yerevan State University relating to Theology, Religious Studies as well as Armenian Studies.

The researches presented in the Yearbook might be of interest of theologians, Religious Studies specialists as well as specialists in Humanities.

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅԻՆ
ՈՐՊԵՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ
ԵՎ ՊԱՏՄԻՉ-ԳՐՈՂ**

Վաչագան Ավագյան

Հովհաննես Դրասխանակերտցին հայ նշանավոր հայրապետներից է, ով, ինչպես տեղեկանում ենք իր «Շարք կաթողիկոսացն հայոց» աշխատությունից, հայոց հոգևոր առաջնորդ է ընտրվել Մաշտոց Եղվարդցի կաթողիկոսից հետո՝ 897 թվականին¹: Այդ մասին մենք իմանում ենք նաև Դրասխանակերտցու «Հայոց պատմություն» գրքից, որը հայ հին գրականության փայլուն կոթողներից մեկն է: Այստեղ նա վկայում է. «Ես՝ խեղճս, թշվառականս, ողորմելիս՝ Հովհաննեսս, որ հոգևոր խրատով գրեցի սույն գիրքը, ոչ թե արժանիքներիս համար դրվեցի սուրբ աթոռին, այլ թերևս չկարողանալով հակառակվել արքայի կամ նախարարակույտ բազմության հրամանին: Թեպետև իմ մանկությունից սկսած աշակերտել եմ այդ սուրբ մարդուն՝ Մաշտոցին, բայց նաև մեր միջև մարմնական ազգակցություն ու հարազատություն կա: Սակայն իմ մեղքերի գերանով կուրացած՝ հարկ չհամարեցի նշմարելու եղբոր ասքի շյուղը...»²:

Թովմա Արծրունի պատմիչը, որ ժամանակակից է Դրասխանակերտցուն, իր Պատմության մեջ մեծ ջերմությամբ է խոսում նրա մասին՝ վկայելով. «Նրա (Մաշտոց կաթողիկոսի- Վ. Ա.) փոխարեն հայրապետական աթոռը ժառանգեց երանելի տեր Հովհաննեսը, որը աճել և ուսում էր առել սուրբ Մաշտոցի մոտ, նրանից հրահանգվող կրթարանում ուսմամբ լցվել, քաղցրաբարո և հեզահայաց տղամարդ էր, միշտ իրեն հասարակ էր պահում, հեռու էր ամբարտավանությունից, բարձրահոնությունից, մնում էր հեզերի աստիճանին՝ դրվատվելով մեր Փրկչից՝ Հիսուս Քրիստոսից»³:

¹ Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, հատ. Գ, Եր., 1968, էջ 479:

² Դրասխանակերտցի Հ., Հայոց պատմություն, Եր., 1996, էջ 187: Այսուհետև այս հրատարակությունից կատարած մեջբերումների համապատասխան էջը կնշվի տեքստում՝ փակագծերի մեջ:

³ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1985, էջ 377:

Լինելով իր ժամանակների պետական և եկեղեցական նշանավոր գործիչներից մեկը՝ Հովհաննես Դրասխանակերտցին իր Պատմության մեջ նկարագրած իրադարձություններից շատերին ժամանակակից է և անմիջական մասնակից, մի բան, որ նրա պատմաձևերին միանգամայն հավաստիություն է հաղորդում¹: «Հովհաննես կաթողիկոսի այդ երկը,- գրում է մեծանուն գիտնական Մանուկ Աբեղյանը,- իր խոշոր մասով ոչ թե սոսկ պատմություն է այս բառի սովորական իմաստով, այլ ինքնակենսագրություն կամ հիշողություններ, և իբրև այդպիսին՝ կյանքի անմիջական կենդանի կոնկրետ արտահայտություն է»²: Շնորհիվ այս հանգամանքի՝ մենք շատ բան ենք իմանում Դրասխանակերտցու կյանքի ու գործունեության մասին: Եվ հետո՝ պատմական տարբեր իրադարձությունների առնչությամբ պատմիչ կաթողիկոսի կատարած խորհրդածությունները ամբողջական պատկերացում են ստեղծում նրա հայացքների, բնավորության ու հոգեբանության վերաբերյալ, որովհետև, ինչպես նշում է Ստեփանոս Մալխասյանը, «որևէ գրուածքի մէջ արտայայտուած մտքերն ու զգացմունքները և արտայայտութեան ոճը բնորոշում են հեղինակի միտքը, սիրտը և բնատրոյթիւնը»³: Այս իմաստով մեզ համար հետաքրքիր է Հովհաննես Դրասխանակերտցին և՛ որպես եկեղեցական ու պետական գործիչ, և՛ որպես պատմիչ-գրող, քանի որ նրա Պատմության մեջ արտացոլվող դեպքերն ու դեմքերը այսպես թե այնպես ներկայացվում են ուրույն աշխարհայացք, բնավորություն ու հոգեբանություն ունեցող պետական գործիչ-պատմիչի տեսանկյունից:

Հեղինակ-պատմիչի կերպարը սկսվում է ուրվագծվել հենց Պատմության առաջաբանում, որտեղ նա ընթերցողին ներկայանում է որպես մի գիտնական այր, որը մեծ սիրով ու երախտագիտությամբ է խոսում իրեն ժամանակով նախորդած այն պատմիչների մասին, որոնք «իրենց մտքի հարստությամբ ու առատությամբ ջանացին երկրի համար օգտակար գործ կատարել, որով մարդկանց անհրաժեշտ կարիքները հոգացին և ստույգ տրամաբանությամբ շարադրեցին՝ մեր նախնիների պատմությունը մատենագրելով իրենց գրվածքների մեջ», որոնք, ինչպես ինքն է

¹ Տե՛ս **Մկրյան Մ.**, Երկեր, հատ. 1, Եր., 1987, էջ 391:

² **Աբեղյան Մ.**, Երկեր, հատ. Գ, Եր., 1968, էջ 483:

³ **Մալխասյան Ստ.**, Դասընթաց հայոց մատենագրութեան պատմութեան, Թիֆլիս, 1908, էջ 179:

խոստովանում, իր համար «ավելի պատվելի, փափագելի և օգտակար են» (7): Բերված հատվածում երևում է գրականության հարգն ու նշանակությունը գիտակցող պատմագրի կերպարը, որը շատ լավ է ըմբռնել հոգևոր արժեքի, գրական, գիտական վաստակի նշանակությունը:

Դրասխանակերտցու մարդկային անհատականության մասին պատկերացում է տալիս նաև նրա՝ իր ձեռնարկած գործի մասին խորհրդածությունը: Խորապես գիտակցելով իր գործի կարևորությունը՝ նա ինքն էլ նախորդների օրինակով որոշում է կատարել մի դժվարին ու պատասխանատու գործ՝ գրել սեփական ժողովրդի պատմությունը. «Այդպես էլ ես այստեղ խորամուխ եղա այն պատմությունների մեջ, որոնք առաջիկայում պետք է շարադրեմ, և դա ոչ թե իմ քմահաճույքով կամ ցանկությամբ, այլ նրա համար, որ ճանաչեցի ինձնից օգտվողների հոգու մտածության անդադար շարժումները, այնուհետև ազդվելով մի նավապետից՝ թիավարելով արագ ընթացա իմ ճառի մակույկով և տառապելով չարչարվեցի այս պատմությունն անել» (9): Թերևս օգտվելով Ագաթանգեղոսի Պատմության հայտնի առաջաբանի գեղեցիկ պատկերների երանգավորումներից¹ Հ. Դրասխանակերտցին էլ ուզում է ցույց տալ, որ հոգևոր արժեքը ստեղծվում և ասպարեզ է գալիս անհատի բացառիկ եռանդի շնորհիվ, դժվար երկունքով:

Առաջաբանի հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ Դրասխանակերտցին իր գործը գրելիս հետևել է որոշակի տեսակետի՝ պատմության բնույթի ու շարադրանքի եղանակի մասին, պաշտպանել է ուրույն սկզբունք. ընթերցողների համար ծիծաղելի չդառնալու համար ուրիշների արդեն մեկ անգամ գրածը հանկարծ միամտաբար նույնությամբ չկրկնել, քերթողների արվեստը չխաթարել: Սա նշանակում է, որ հեղինակը էական է համարել շարադրանքի գեղեցկությունը, աշխատանքի գիտական կողմի ապահովումը: Ու եթե նա իր խոսքը որակում է «տրորված ու աղքատիմաց», ապա սուկ համեստության անհրաժեշտ սահմանները չըջանցելու համար, ինչպես հաճախ անում էին նաև նրա նախորդ հայ մատենագիրներից շատերը, օրինակ, Եղիշեն²:

¹ Տե՛ս Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Եր., 1983, էջ 6-23:

² Տե՛ս Եղիշեն, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Եր., 1989, էջ 9:

Պատմության առաջաբանում Հ. Դրասխանակերտցին ներկայացնում է նաև իր գրելիքի համառոտ ծրագիրն ու նպատակը. «Ես չեմ ուզում առաջաբանի վրա երկար ժամանակ վատնել, որովհետև ցավագին ծերությունը մահը պատրաստ պահում է դռան հետևում, և տագնապն ու տարակուսանքն ստիպում են հապճեպորեն պատմել մեզ հասած անցքերի, աղետների, անհամար խռովությունների ու դեպքերի մասին: Ուրեմն՝ այսուհետև իմ տրորված ու աղքատիմաց խոսքն արագագիր դպիրի գրչությամբ առաջ կտանեմ նախ գրքերի միջոցով դիմելով հայրերին՝ ըստ նախապես նրանց գործի, երևի փոքր-ինչ ծանոթացնելով Նոյի որդիներից սկսած բոլոր ազգերի ու ցեղերի նախնական տարածվելուն և ապա մեր Հաբեթին...» (9): Հիշյալ տողերում արդեն ուրվագծվում է նաև երկրի ճակատագրով մտահոգված հեղինակ-պատմիչի կերպարը, որը մարդկայնորեն ապրել է հայրենի երկրի ծանր դրաման, տագնապել նրան պատուհասած ներքին խռովություններից ու աղետներից:

Հիշյալ մեջբերումից նաև հայտնի է դառնում, որ Դրասխանակերտցին իր Պատմությունը գրել է ծեր հասակում, և ինչպես Մ. Մկրյանն է կարծում, հավանաբար իր կյանքի վերջին տարիներին, երբ Բագրատունիների թագավորության բավական ծանր ու խառնակ շրջանում ապաստանել էր Վասպուրականի Գագիկ թագավորի մոտ, ուր վայելում էր փոթորկահույզ անցքերից ազատ մի խաղաղ և ապահով կյանք¹:

Դրասխանակերտցին, ինչպես արդեն հասկացանք, բուն պատմությունը սկսում է Նոյից ու նրա որդիներից: Հետո «չափավոր ձևով» շարադրում է Հաբեթի սերունդների հաջորդականությունը, հասնում Հայկ ու «արագ ու հապճեպ, համառոտելով, սեղմ բովանդակությամբ» տալիս հետագա ժամանակներում պատահած քաղաքական ու եկեղեցական դեպքերի նկարագիրը: Պատմությունը, որ հասնում է մինչև 10-րդ դարի առաջին քառորդ, հատկապես հետաքրքիր է և կարևոր է դառնում՝ 850-ական թվականներից սկսած, քանի որ մինչ այդ ներկայացված նյութը իր հիմնական մասով բնականաբար քաղված է նախորդ պատմագիրներից, մասնավորապես Մ. Խորենացուց ու Եղիշեից: Իսկ Աշոտ Բագրատունու իշխանության և թագավորության շրջանի մասին համեմատաբար շատ համառոտ պատմելով՝ Դրասխանակերտցին հայտնում է, որ իրենից առաջ այդ մասին շարադրել

¹ Տե՛ս Մկրյան Մ., Երկեր, հատ. 1, Եր., 1987, էջ 391:

է Շապուհ Բագրատունին¹, ուստի ինքը այդ ամենը մատուցում է, «որ կցկտուր տեղեկություններ չստացվեն»: Պատմության հետագա մասը, որ վերաբերում է Սմբատ թագավորի և նրա որդի Աշոտի ժամանակին, այդ շրջանի հայոց պատմության մասին գլխավոր վավերական աղբյուրն է և արդեն գրված է միանգամայն ինքնուրույն, աչքի է ընկնում գրական-գեղարվեստական ուրույն շնորհքով, կենդանի դիտումներով ու հոգեբանությամբ, դեպքերի ու ապրումների հետաքրքիր ծավալումով և ինքնակենսագրական հուզիչ մանրամասներով:

Դրասխանակերտցու Պատմության նոր շրջանը մեր առջև բաց է անում հեղինակի ապրած ժամանակի մոտավորապես 30-35 տարիների փոթորկալից ժամանակաշրջանի պատկերը, որը սկսվում է Սմբատ Առաջինի թագավորության խիստ անհանգիստ, ողբերգական ու ցնցող անցքերի նկարագրությամբ:

Լինելով կաթողիկոս՝ Հովհաննես Դրասխանակերտցին մխրճվում է իր ապրած պատմաշրջանի քաղաքական անցուդարձերի մեջ, դառնում ականատես Բագրատունյաց թագավորության հիմնադրման և ամրապնդման համար մղվող մարտերին, կրում արաբական կռիվների սարսափները, Ատրպատականի ոստիկան Յուսուփ բռնակալի դաժանությունները: Նա հաճախ հաշտության միջնորդի դեր է ստանձնում հայ իշխանների, թագավորի և Ատրպատականի ոստիկանների միջև և վրդովվում իշխանների ներքին երկպառակությունների պատճառով: Դրասխանակերտցին դատապարտում է նախարարների անմիաբանությունն ու ազգային համընդհանուր գիտակցության պակասությունը, որը և համարում է Հայաստանի ավերման գլխավոր պատճառ:

Կաթողիկոսի կյանքի ու գործունեության հետ կապված մի շարք պատմություններից երևում է, որ նա եղել է քնարական խառնվածքի տեր մի անձնավորություն, որ, ինչպես Մ. Մկրյանն է գրում, «ժամանակի քաղաքական ու սոցիալական հանգամանքների բերումով, թերևս նաև իր մեղմ բնավորության հետևանքով մի առանձին հեղինակություն ու ազդե-

¹ Աշոտ Բագրատունու ու նրա ժամանակի պատմության համար Հ. Դրասխանակերտցին որպես սկզբնաղբյուր հիշատակում է ոմն Շապուհ Բագրատունու գիրքը, տե՛ս **Դրասխանակերտցի Հ.**, Հայոց պատմություն, Եր., 1996, էջ 11: Այդ գիրքը հայտնաբերված չէ, և վերջինիս բովանդակության վերաբերյալ գաղափար կարելի է կազմել միայն Հ. Դրասխանակերտցու շնորհիվ:

ցություն չի ունեցել դաժան բարքերի տեր ֆեոդալների փոխադարձ թշնամությունը, իրարից կալվածքներ հափշտակելու նպատակով մղվող կռիվները կանխելու ու հաշտարարի դեր կատարելու համար»¹: Եվ իսկապես էլ, եթե մի փոքր խիստ լինենք, թերևս կարելի է նաև ասել, որ Դրասխանակերտցին երբեմն որոշ քաղաքական թուլություն է դրսևորել Հայաստանի անկախությանը սպառնացողների նկատմամբ: Այսպես, երբ Սմբատ Առաջինի և ոստիկան Յուսուփի միջև առերես հաշտություն է կնքվում, Յուսուփը Սմբատին թագ է ուղարկում, իսկ նրա ավագ որդուն՝ Աշոտին, նվիրում է սրընթաց երիվար, պերճաշուք զգեստներ, կարգում Հայոց իշխանաց իշխան, ինչպես նաև նվերներ է ուղարկում կաթողիկոսին՝ «արքունական պատվով ու լավագույն պաշտամունքով» մեծարելով նրան. «Բայց ես ևս, որ այս գրեցի, առատաձեռնորեն պատվվեցի ոստիկանի կողմից. նա ինձ մատուցեց նաև ոսկեզօծ զարդերով զարդարած ջորի» (201): Այստեղ երևում է Դրասխանակերտցու բնավորության անմիջականությունը:

Շուտով, սակայն, Դրասխանակերտցին կալանավորվում է նույն Յուսուփ ոստիկանի կողմից՝ երկար ամիսներ մնալով բանտարկության մեջ և կրելով բազմաթիվ նեղություններ: Դա այն ժամանակ էր, երբ Նախճրվան քաղաքը իրեն չվերադարձնելու պատճառով «գլխավոր ու գահերեց» իշխան Գագիկ Արծրունին խարդախությամբ չարախոսում է Սմբատից Յուսուփի մոտ, ամբաստանում նրան, իսկ Յուսուփն էլ, Գագիկին տալով արքունական թագ, քակտում է Սմբատի և Գագիկի միաբանությունը և չնայած Սմբատի հետ կնքած խաղաղության դաշինքին՝ պատրաստություն տեսնում ներխուժելու Հայաստան: Սմբատ արքան սպառնալիքը կանխելու նպատակով Հովհաննես կաթողիկոսին թանկարժեք նվերներով ուղարկում է ոստիկանի մոտ բանակցությունների: Դրասխանակերտցին պատմում է. «Երբ հայտնի դարձավ կեղծիքը, մեզ զեկուցվեց հագարացի վայրագ գազանի մոնչյունն ու սպառնալիքը, բարոյական Սմբատ արքայի ցանկությամբ և նախարարների դրդմամբ, ես դիմեցի, գնացի պարսկական Ատրպատական՝ ոստիկանի մոտ, ընծաներով ու շատ պարզևներով, արքունի թանգարաններից վերցրած ոսկեհյուս երևելի զգեստներով, ջուլհակագործ կանանց նկարակերտ բարձերով և բազում ձիեր, ջորիներ, ոսկու և արծաթի գանձեր, որպեսզի կարո-

¹ Մկրյան Մ., Երկեր, հատ. 1, Եր., 1987, էջ 296:

ղանայի նրա հետ խաղաղության ճար գտնել, որպեսզի Սիոնի մայրը անզավակ մոր նման իսպառ չգրկվեր իր որդիներից» (213): Սակայն սկզբնական բարեհամբյուր վերաբերմունքը փոխվում է, և արյունոտ զագանը «մահացու խարդախությամբ դուրս քաշելով բռնում է» կաթողիկոսին, բանտարկում խավար տեղերում, «շրջապատում բազում պահակներով, պաշարում նեղող աղմուկով» և, ինչպես պատմիչն է նշում, «ապուշ դարձնում» (215): Հետո Յուսուփը կաթողիկոսին շղթայակապ իր հետ տանում և բանտարկում է Դվին քաղաքում: Դրասխանակերտցու նկարագրած անձնական տանջանքները հիշեցնում են Գրիգոր Լուսավորչի կրած տառապանքները. «Իսկ ինձ նա բանտարկեց Դվին քաղաքում, մետաղյա բանտում, երկաթյա կապանքներով: Այնուհետև այն խավարչտին տեղում ու անձուկ վայրերում այն դահիճների կողմից ես կրեցի մահահոտ լուտանքներով ծեծ, բանտ, գելարան, ինչպես նաև սաստիկ ու դառն կշտամբանքներով զցվեցի խոր փոսերն ու վիհերը...» (219): Ոչ մեկի կողմից չհուսադրվելով՝ կաթողիկոսը ստիպված ոստիկանից խնդրում է թողություն, «ինչպես որ երբեմն մեկը ելք էր փնտրում Պրոտիրիադայի սանդարամետից և դա ոչ թե ներկա մահվանից վախենալու պատճառով, որ Աստծո կամքով է, այլ որպեսզի ոսկու համար հոգ տաներ» (221): Դրասխանակերտցին չի նշում, թե ինչպես է իրեն հաջողվում փախչել արգելարանից, միայն հիշատակում է, որ «Չկար մեկը, որ օգներ ինձ: Այդ պատճառով ես այստեղ (Դվին- Վ. Ա.) բերվեցի: Եվ վերին օգնությունը ինձ դուրս կորզեց, ազատեց նրա ձեռքից, որի ձեռքերը լի էին արյամբ» (221): Ինչպես հասկանում ենք, Դրասխանակերտցին իր փրկությունը պայմանավորում է աստվածային նախախնամությամբ:

Դրասխանակերտցին մեծ ցավ է ապրում Հայոց աշխարհի կործանման համար, և նրա պատմության մեջ կարդում ենք վշտի ու հուսահատության բազմաթիվ տողեր. «...Իմ սիրտը տանջվում էր տագնապի տարակուսանքով և լացելուց հալվում-մաշվում էր այն, որովհետև մեր անօրենության պատճառով Տիրոջ խնամակալությունը անտեսեց մեզ, և մեր գործերի սևաթույր տխրությունից ճշմարիտ արեգակը խեթ նայեց մեզ... Տիրոջ ժառանգությունը տրորվեց ճանապարհի խոզական երկրապիշ անցորդների պիղծ գարշապարների տակ... Օտարներից առավել տան բնակիչների կողմից բուսավ դառնության արմատը, որովհետև սյուներ համարվածները ապստամբեցին Տիրոջ դեմ և իրենց լեզուները զինելով նանրությամբ ու անիրավությամբ, մեր իշխանների առաջ խոսեցին թյուր

ու խոտոր բաներ: Խաբեքա ու ստախոս մարդիկ փոխարինեցին արդար ու ճշմարտախոս մարդկանց» (223, 225): Այս և բազմաթիվ այլ տողերում վառ գույներով է դրսևորվում երկրի ճակատագրով մտահոգված հեղինակ-պատմիչի կերպարը: Նա մարդկայնորեն ապրում է հայրենի երկրի ծանր դրաման: Նա իր աշխատության մեջ հաստատում է օտար նվաճողների դեմ մղվող պայքարում հայերի միաբնության և համախմբվածության անհրաժեշտության գաղափարը: Դրասխանակերտցին հետևողականորեն անարգանքի սյունին է գամում բոլոր նրանց, ովքեր գործակցել են օտար նվաճողներին ու բռնակալներին, ուրացել իրենց հավատը: Նա ոչնչացնող ատելությանը վերջիններիս համար գրում է. «Ազնվական մարդիկ ուրանալու պատճառով խայտառակվեցին ու հասան խոր աղքատության և մինչև անգամ աղքատների դռներն էին շրջում ու հաց մուրում՝ ժառանգելով միայն կորստական մոլորության ու անարգության անուն: Նրանք իրենց շրթունքներով չխոստովանվեցին. սաստիկ դառնությամբ իջան դժոխք՝ միջոց դառնալով գեհենի հրի համար»: Եվ ապա ընդօրինակելով Եղիշեին՝ Դրասխանակերտցին էլ իր նախորդի նման նզովք է կարդում դավաճաններին¹. «Եվ սա ես գրեցի կշտամբելու ու հանդիմանելու համար նրանց, ովքեր մտածում են նրանց գործերին ցանկացող լինել» (257, 259):

Երբ Դրասխանակերտցուն հաջողվում է փախչել բանտարկությունից, նա Սմբատ Առաջինի նահատակությունից հետո արաբների հալածանքներից խուսափելու համար չի ցանկանում մնալ Հայաստանում և գնում է Աղվանք, իսկ այնտեղից՝ Վրաստան՝ մեծ ընդունելություն գտնելով Ատրնեսրեսե թագավորից: Այստեղ էլ ստանում է Կոստանդնուպոլսի Նիկողայոս մեծ պատրիարքի թուղթը, որտեղ վերջինս նախ ցավակցում է մեր ժողովրդին արաբներից հասած չարչարանքների համար, ապա խորհուրդ է տալիս միաբանվել արբազ ու Աղվանից իշխանների հետ և միաբանված մարտնչել ամբարիշտ թշնամու դեմ: Ինքն էլ իր կողմից երաշխավորում է, որ հարկ եղած դեպքում բյուզանդական կայսրը օգնության զորք կուղարկի: Իր նախաձեռնությամբ հաշտության դաշն հաստատելով Վրաց թագավորի հետ՝ Դրասխանակերտցին գալիս է Տարոն, որտեղից էլ նամակ է ուղարկում բյուզանդական կայսր Կոստանդինին՝ խնդրելով Սմբատի որդի Աշոտին թագադրել Հայոց աշխարհի վրա և

¹ Տե՛ս Եղիշեի Պատմության յոթերորդ եղանակում, ինչ որ նա ասում է Վասակի մասին, Եր., 1989, էջ 283:

զորքով օգնել նրան՝ արաբներին երկրից դուրս վռնդելու համար: Այդ ծավալուն նամակը գրված է շատ նրբանկատորեն, ճարտասանական հմտությամբ և, ինչպես Մ. Մկրյանն է իրավացիորեն նկատում, պետական արժանապատվության զգացումով լի¹:

Կայսրը Աշոտին և Հովհաննես կաթողիկոսին հրավիրում է Բյուզանդիա: Վերջինս թագաժառանգին ուղեկցում է մինչև Դերջան, շուրջ մեկ ամիս մնում այստեղ, ու թեև հրավիրակը, ինչպես Դրասխանակերցին է գրում, հաճախակի իրեն սիրալիությամբ հրավիրում էր գնալ պալատ՝ կայսեր մոտ, սակայն ինքը հրաժարվում է՝ մտածելով, «որ գուցե գտնվի մեկը» և իրեն կասկածի ու համարի քաղկեդոնական (տե՛ս 289):

Սահմանին գտնվելիս՝ մինչ կվերադառնար թագաժառանգը, Դրասխանակերցին շրջում է Գրիգոր Լուսավորչի անվան հետ կապված վայրերում, լինում Մանյա այրում: Իսկ հետո այցելում է Սեպուհ լեռան ճգնավորներին, որոնց հետ ապրում է ինն ամիս: Այնուհետև, հրապուրվելով «մեր թագավորների կեղծավոր ու քսու խոսքերից» ու «բարի խոստումներից, որոնք ըստ Աստծու են», վերադառնում է Արևելյան Հայաստան: Սակայն նա ցավում է, որ վերադարձել է, որովհետև, ինչպես ինքն է գրում, «ես չտեսա ոչ մի հատուցում նրանց խոստման համաձայն, այլ փուչ խորհրդով ու խավար մտքով նրանք շեղվեցին դեպի անիրավությունը, և դղրդալով սասանվեց մեր ողորմելի աշխարհը մերոնց պատճառով» (291): Բանն այն է, որ խորամանկ Յուսուփին հաջողվում է թշնամություն գցել Սմբատի որդի Աշոտ թագավորի և իր ձեռքով թագավորած Աշոտ սպարապետի միջև: «Եվ քանի որ նրանց երկուսի վրա դրված էին թագավորական անուններ, նրանք,- գրում է Դրասխանակերցին,- միմյանց նկատմամբ լցվում են նախանձով ու չարակնությամբ և այդ պատճառով ավելի ընդվզելով՝ զայրանում էին, և նրանցից յուրաքանչյուրը պահանջում էր իրեն (թագավոր) կարգել» (297): Կաթողիկոսը ցանկանում է և ձգտում հաշտեցնել հակառակորդ կողմերին և դրա համար քիչ նեղություններ չի կրում. «Իսկ ես հալածանքներից (ազատվելով)՝ հարմար պահին հեռաստանից եկա, հասա և բանակցելով նրանց հետ ու համոզելով նրանց, ջանում էի նրանց միջև վայելուչ եղբայրական լծակցություն ստեղծել» (301): Սակայն, ավա՛ղ, Աշոտ արքայորդու և իր անվանակից հորեղբորորդու միջև կնքված «միաբանական դաշինքը» ու

¹ Տե՛ս Մկրյան Մ., Երկեր, հատ. 1, Եր., 1987, էջ 399:

«խաղաղավետ սերը» շատ կարճ է տևում, և նրանք նորից սկսում են միմյանց դեմ պատերազմել: Կարծեք մի վերջին փորձով Դրասխանակերտցին դարձյալ ցանկանում է վերականգնել հաշտությունը, «նրանց միջից վերացնել չար սերմնացանի որոմը», սակայն ցավով վկայում է, որ «նրանք չմնացին իրենց բարեզարդ խոսքերի մեջ, այլ շտապ դառնալով դեպի չար նախանձը՝ դարձյալ հակամիտում էին և տակավին միմյանց դատափետում էին չարի կշտամբանքով ու բորբոքված նախանձով» (301): Դրասխանակերտցու՝ իբրև պատմիչի արժանքներից մեկն այն է, որ նա շատ լավ է հասկացել հայ իշխանների միջև ծավալված կռիվների ողբերգական էությունը երկրի և ժողովրդի համար և ամբողջ ուժով քննադատել է: Նա ցավով վկայում է, որ «նրանց՝ իրար հետամտելու ու միմյանց շուրջը պտտվելու պատճառով առհասարակ դղրդում, երերում, ավերվում, քանդվում ու կործանվում էր իրենց աշխարհի սեփական տերությունը: Եվ իրենց մեծությունն ու փառքը օտարներին տալով՝ նրանք ուրիշներին հարստացրին և իրենց աղքատության մատնեցին» (301):

Իր ծերության տարիներին, երբ Յուսուփի փոխարեն մեծ զորագնդերով Դվին է գալիս Նըսըր ոստիկանը և իր նախորդին հրամայում հետապնդել Աշոտ թագավորին, Դրասխանակերտցին դարձյալ ստիպված է լինում ապաստան որոնել երկրի այս ու այն կողմերում: Նախ փախչում է Գեղամա լեռները, հետո՝ Սևան և ապա գալիս իր ձեռակերտ Բյուրական «ամրոցիկը»: Սակայն երբ մոտենում են թշնամու զորքերը՝ իրեն բռնելու և գերելու համար, նա, «շատ շուտ ծանոթանալով նրանց մառախլապատ ու միգապատ մոլորությանը», ճողոպրում և գալիս է Բագարանի արքունական ապարանքը՝ Աշոտ սպարապետի մոտ, և ի վերջո՝ Վասպուրական՝ «Հայոց Գագիկ թագավորի մոտ՝ նրա մշտական հրավերի ու կանչի համաձայն»:

Դրասխանակերտցու Պատմությունը ավարտվում է մի տեսակ ողբով, որտեղ հեղինակը հուսադրում է իր ժողովրդին, քաջալերում՝ պահպանելու կրոնը, լավ բարքերն ու միաբանությունը:

Ինչպես արդեն կռահեցինք վերը շարադրվածից, անընդհատ գործողությունների մեջ հանդես եկող Դրասխանակերտցի կաթողիկոսը իր Պատմության մեջ մեզ ներկայանում է ոչ միայն իբրև իր կողմից նկարագրվող բազմաթիվ դեպքերի ականատես ու վկա, այլև հաճախ հանդես է գալիս սեփական ապրումներով, խորհրդածություններով, որոնք նրա անձնավորությանը տալիս են գրական կերպարի արժեք և ստեղ-

ծում առանձնակի բնավորություն: Եվ ճիշտ է նկատված, որ «Գիրքին ընթերցումը աւելի վիպական գործի մը տպավորութիւնը կը ձգէ՝ քան պատմաքննական երկասիրութեան», և դա շնորհիվ այն բանի, որ հեղինակը իր նկարագրած դեպքերի ու իրադարձությունների մեջ «գիտէ ալ դնել զգացում եւ սիրտ»¹: Նա գրավում է ընթերցողին իր անկեղծ ներշնչանքով, վառ հայրենասիրությամբ և ազդեցության մեծ ուժով:

Դրասխանակերտցին մեր առջև հանդես է գալիս նախ և առաջ որպես 10-րդ դարի մարդ՝ իր աշխարհայացքով ու տեսակետներով, որպես խելացի քաղաքագետ, որը լավ է հասկացել թշնամու կողմից հայ իշխանների մեջ պառակտում մտցնելու, նրանց միաբանությունը խախտելու հեռահար նպատակները: Դրասխանակերտցու Պատմության մեջ վառ գույներով է դրսևորվում երկրի ճակատագրով մտահոգված հեղինակ-պատմիչի կերպարը: Նա մարդկայնորեն ապրում է հայրենի երկրի ծանր դրաման: Նա, ինչպես արդեն ասվել է նրա կյանքի հանգամանքների մասին խոսելիս, իր աշխատության մեջ բազմիցս հաստատում է օտար նվաճողների դեմ մղվող պայքարում հայերի միաբանության և համախըմբվածության անհրաժեշտության գաղափարը: Դրասխանակերտցին, շնորհիվ իր հայրենասիրության, Պատմության մեջ անչափ ցայտունորեն արտահայտել է առանձին նախարարական տների՝ երկրի ընդհանուր շահերի նկատմամբ ունեցած անտարբերության, շատ անգամ նույնիսկ դավաճանական գործունեության դեմ ուղղված ցասումնալից բողոքը, չի խուսափել դատապարտել անգամ Աշոտ Երկաթին ունեցած բարոյական սայթաքումների համար: Պատմիչը, իր աշխատության վերջաբանում դիմելով ընթերցողներին, ասում է. «Արքունական հաստատուն ճանապարհից մի՛ շեղվեք աջ կամ ձախ՝ ձեր կամքով հետևելով խաբողի պատրանքներին, որովհետև երկու կողմերում էլ դարանակալում է ավազակների բազմությունը, և նրանց ձեռքն ընկնողների բաժինը մահն է» (365):

Դրասխանակերտցու էությունը բացահայտվում է նաև իր գործի խոսքի կուլտուրայի, բառընտրության, կառուցվածքի, այլ խոսքով ասած՝ ոճի մեջ. նա զգացմունքային է և պերճախոս, նա ոչ թե պատմում է դեպքերը, այլ ապրում է դրանցով, գնահատում է փաստերը, հուզվում ու քրննադատում, գնահատում ու այպանում. «Նրա ոճը ճարտասանական է,

¹ Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեան, Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ, 1992, էջ 295:

արտահայտիչ դարձուածքներով լեցուն, որը տպաւորիչ է դարձնում բնորոշումներն ու կողմնակի շեղումները»¹, - գրում է գրականագետ Սրբուհի Հայրապետյանը:

Այսպիսով՝ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը», որ հայ հին գրականության փայլուն հուշարձաններից մեկն է, առանձնանում է ոչ միայն իր գիտական արժեքով՝ հանդիսանալով Սմբատ Առաջին Բագրատունի թագավորի և նրա որդի Աշոտ Երկրորդի ժամանակաշրջանի վերաբերյալ ընդարձակ տեղեկություններով ամենագլխավոր աղբյուր, այլև իբրև մի իսկական գրական գործ, որ վկայում է հեղինակի մտավոր կարողությունը: Հենվելով պատմագրի դատողությունների, խորհրդածությունների, հերոսներից յուրաքանչյուրի նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքի վրա՝ մենք պատկերացում ենք կազմում նաև հենց իր՝ հեղինակի անհատականության, նրա աշխարհայացքի, մտածելակերպի մասին, որովհետև Պատմության մեջ արտահայտված մտքերն ու զգացմունքները և արտահայտության ոճը բնորոշում են հեղինակի միտքը, սիրտը և բնավորությունը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻՆ ՈՐՊԵՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԵՎ ՊԱՏՄԻՉ-ԳՐՈՂ

Վաչագան Ավագյան

***Բանալի բառեր՝** Հովհաննես Դրասխանակերտցի, պատմություն, պատմագիր, գրականություն, կաթողիկոս, գրող, կերպար, ինքնակենսագրություն, աշխարհայացք, հայրենասիրություն, դավանանք, գաղափարախոսություն:*

Հոգվածում ցույց է տրվում, որ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը», լինելով հայ հին գրականության փայլուն հուշարձաններից մեկը, առանձնանում է ոչ միայն որպես պատմագիտական բարձրարժեք աշխատություն, այլև իբրև մի իսկական գրական գործ, որում նկարագրվող իրադարձությունները, պատմական դեմքերը, դեպքերի զարգացման ընթացքը ներկայացվում են հեղինակային «ես»-ի տեսանկյունից, նրա բնորոշմամբ ու գնահատմամբ, որոնց միջոցով բացահայտվում է նաև երկրի ճակատագրով մտահոգված պատմագրի գեղարվեստական կերպարը:

¹ **Հայրապետյան Ս.**, Հայոց հին եւ միջնադարեան գրականութեան պատմութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1988, էջ 302:

КАТОЛИКОС ОВАННЕС ДРАСХАНАКЕРТЦИ КАК ЦЕРКОВНО-ПОЛИТИЧЕСКИЙ ДЕЯТЕЛЬ И ПИСАТЕЛЬ-ИСТОРИК

Вачаган Авагян

Ключевые слова: Ованнес Драсханакертци, история, историк, литература, католикос, писатель, образ, автобиография, мировоззрение, патриотизм, вероисповедание, идеология.

В статье показано, что "История Армении" католикоса Ованнеса Драсханакертци, выделяется не только как ценнейший историографический труд, а также как подлинная литературная работа, в которой изображенные события, исторические лица, ход развития действий представляются с точки зрения авторского "я", с его определениями и оценками, с помощью которых выявляется художественный образ историографа, озабоченного судьбой страны.

HOVHANNES THE CATHOLICOS DRASKHANAKERTTSI AS AN ECCLESIASTICAL STATESMAN AND HISTORIOGRAPHER-WRITER

Avagyan Vachagan

Key words: Hovhannes Draskhanakertsi, history, historiographer, literature, catholicos, writer, character, autobiography, worldview, patriotism, faith, ideology.

The present article touches upon the "Armenian History" of Hovhannes Catholicos Draskhanakertsi, as being one of the brilliant memorials of the old Armenian literature, excels not only as a valuable historical work, but also as a genuine literal work. The events, historical figures, courses of the incidents depicted in that book are introduced from the point of view of the author himself, by his characterization and assessment, through which the artistic character of the writer, who is concerned with the destiny of the country, is also revealed.